



**ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

*Ուսումնասիրության արդյունքների
զեկույց*

Արմավիր 2018
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
ԳԼՈՒԽ 1.....	5
1.1 Սոցիալական ծառայությունների տրամադրման իրավաօրենսդրական կարգավորումները	5
1.1.2 ՀՀ Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը.....	10
1.1.3 ՀՀ ինտեգրված սոցիալական ծառայությունների հիմնական գործառույթներն են	11
1.1.4 Դեպքի վարում	12
1.1.5 Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ	14
1.1.6. Միջգերատեսչական սոցիալական համագործակցություն	16
1.1.7 Համաձայնագիր	16
1.1.8 Տեղական սոցիալական ծրագրեր	19
1.2. Խնամակալության և հոգաբարձության մարմիններ.....	21
1.2.1 Իրավաօրենսդրական դաշտ	21
1.2.5 ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐԶՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ.....	32
1. 2.6 Մեթոդական ուղեցույց	34
ԳԼՈՒԽ 2.....	35
Արմավիր և Արարատ մարզերում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները	35
2.1. Իրականացված դաշտային աշխատանքների ընդհանուր նկարագրություն	35
2.2 ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ԽՀՄ հանձնաժողովների անդամների հետ իրականացված հարցումների արդյունքները	41
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	47
Հավելված	49

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիա, ՀԿ-ի «Սոցիալական աշխատողների համագործակցություն հանուն արևելյան գործընկերության երկրներում սոցիալական փոփոխությունների» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատու է «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն, և նրանում արտահայտված տեսակետները կարող են չհամընկնել «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիա տեսակետների հետ:

Ներածություն

Հետազոտության շրջանակներում իրականացվել է ՀՀ Արմավիրի և ՀՀ Արարատի մարզերում գործող սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների այդ թվում նաև ՀՄՕՏԿ-ների, Խնամակալության և հոգաբարձության մարմինների և կից հանձնաժողովների, տարածքային մակարդակում գործող աջակցող ցանցերի և միջգերատեսչական սոցիալական համագործակցությամբ նախատեսված աշխատանքների հետազոտում պարզելու առկա բացթողումներն ու խնդիրները: Միաժամանակ երկու մարզերի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատողների շրջանում իրականացվել են հարցումներ: Հավաքագրված տեղեկատվության հիման վրա փորձագետի կողմից մշակվել է առաջարկությունների փաթեթ՝ ուղղված վերոնշյալ կառույցների գործունեության և համագործակցության բարելավմանը, սոցիալական աշխատանքի բաղադրիչի ներառմանն ու կարևորմանը:

Հաշվի առնելով ուսումնասիրվող առարկայի բազմազանությունը ուսումնասիրվել են սոցիալական պաշտպանության համակարգին առնչվող իրավաօրենսդրական դաշտը, 2015 թվականին ընդունված ՀՀ սահմանադրությամբ նախատեսված իրավաօրենսդրական փոփոխություններ ընդգրկող և շրջանառվող նախագծերը, անհատ փորձագետների կամ կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունները, մամուլում տեղ գտած հրապարակումներ, գիտական հոդվածներ և գրականություն:

Հետազոտության առանցքում երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներն են, որոնք մշտապես ընդգրկում են սոցիալական պաշտպանության համակարգի ամենազգայուն կողմերը: Անկախ այն հանգամանքից, որ հետազոտության դաշտային աշխատանքների համար ընտրվել են ՀՀ Արմավիրի և ՀՀ Արարատի մարզերը, ուսումնասիրվող առարկան առավել զլոբալ դաշտ է ընդգրկում քան համայնքային մակարդակը:

Միաժամանակ հետազոտության շրջանակներում փորձ է արվել գտնել այն օպտիմալ տարբերակները, որոնք հնարավորություն կընձեռեն շտկելու առկա իրավիճակը և նպաստել, որ Խնամակալության և հոգաբարձության մարմինները բարձրացնեն իրենց գործունեության արդյունավետության մակարդակը:

Հետազոտությունը ձևավորում է մտքերի, կարծիքների և առաջարկությունների բանավեճային բաց հարթակ, որը կարող է գլոբալ առումով ծառայել իբրև երեխաների իրավունքների պաշտպանության, ընտանիքներին մատուցվող սոցիալական ծառայությունների բարելավման գործիք:

ԳԼՈՒԽ 1

1.1 Սոցիալական ծառայությունների տրամադրման իրավաօրենսդրական կարգավորումները

Սոցիալական պաշտպանության համակարգում ընթացող բարեփոխումների համատեքստում թվարկենք այն իրավաօրենսդրական կարգավորումներն ու լուծումները, որոնք էական նշանակություն են ունեցել ժամանակակից սոցիալա-իրավական համակարգի ձևավորման գործում՝

1999 թվականի հունվարի 1-ից ներդրվեց աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրը, որով ավելի ծանրակշիռ դարձվեց երեխաների գործոնի դերն ընտանիքի կարիքավորության վերջնական աստիճանի գնահատման ժամանակ: Նույն տարում վերականգնվեցին խնամակալության, հոգաբարձության և որդեգրման հանձնաժողովների աշխատանքները:

Սոցիալական որբության կանխարգելման նպատակով բարեփոխվեց որդեգրման գործընթացը, մշակվեցին որդեգրման գործընթացն ապահովող մի շարք իրավական ակտեր,

2003 թվականին ստեղծվեց տեղեկատվական շտեմարան, որում մուտքագրվեց 2000 թվականից սկսած՝ կենտրոնացված հաշվառման վերցված՝ որդեգրման ենթակա երեխաների, որդեգրողների թեկնածուների, ինչպես նաև որդեգրված երեխաների ու որդեգրողների տվյալները,

2002-2003 թվականներին ընդունվեցին երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառի կարգավորման համար կարևորագույն նշանակություն ունեցող մի շարք օրենքներ, այդ թվում՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (այն հետագայում 6 օրենքներով փոփոխվել և լրացվել է) և ՀՀ քրեական օրենսգիրքը, որոնցով առաջին անգամ սահմանվեցին, համապատասխանաբար, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական, կազմակերպական հիմքերը, նպատակները, սկզբունքները և ձևերը, ինչպես նաև

ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները, անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները: 2003 թվականին մշակվեց նաև ՀՀ-ում 2007-2009 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը, որը ներառում էր նաև անչափահասների շահագործման խնդիրները:

2004-2016 թվականներին սկիզբ դրվեց երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագրի ընդունմանը: Այս փուլում ընդունվեց 2004-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որի շնորհիվ նախանշվեցին ՀՀ-ում երեխաների նկատմամբ պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, պետական կառավարման համակարգում կյանքի կոչվեց երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը, կատարվեցին երեխաների սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային իրավունքների երաշխավորմանն ուղղված կարևոր օրենսդրական բարեփոխումներ, իրականացվեցին երեխաների տարբեր հիմնախնդիրների լուծմանն ուղղված մի շարք կարևոր ծրագրեր, մասնավորապես՝

2004 թվականին ընդունվեցին ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքը, որոնցով, ի թիվս այլնի, համապատասխանաբար, սահմանվեցին երեխաների աշխատանքային իրավունքները, պարտականությունները և երաշխիքները, կարգավորվեցին առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերման և տեղավորման, խնամատար ընտանիքին վերաբերող մի շարք հարցեր, սահմանվեցին երեխայի ծննդյան, անվան փոփոխման, հայրության որոշման, որդեգրման, մահվան ակտերի գրանցման հետ կապված հարաբերությունները: Նույն թվականին հաստատվեցին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները,

2005 թվականին ընդունվեցին երեխաների իրավունքներին առնչվող «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը (որը 2014 թվականին համանուն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել), «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (այն

2013 թվականին համանուն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել), «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը և «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը:

Նույն տարում սահմանվեցին երեխաների խնամքն իրականացնող հաստատությունների հիմնական տիպերը՝ հստակեցնելով յուրաքանչյուր հաստատությունում երեխաների տեղավորման չափանիշները: 2005-2006 թվականներին Երևանի Աջափնյակ թաղային համայնքում և Գյումրիում ստեղծվեցին Երեխաների սոցիալական հոգածության համայնքային ցերեկային մեկական կենտրոններ,

2006 թվականին հաստատվեցին առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգը, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարությունը, որում արտացոլվեցին երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված բարեփոխումների քաղաքականության նպատակները, հիմնական սկզբունքները, այդ թվում՝ երեխայի շահերի առաջնահերթությունը, խտրականության բացառումն ու հավասար հնարավորությունների ընձեռումը, ընտանեկանին մոտ միջավայրի ապահովումը,

2007 թվականին հաստատվեցին մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխաների խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները: 2007 թվականից սկսած՝ իրականացվեցին առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված մի շարք ծրագրեր, մասնավորապես, բնակարանի կարիք ունեցող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և նրանց թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառումը, 17 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների վերակազմավորումը երեխաների խնամքի և պաշտպանության 7 գիշերօթիկ հաստատությունների, Մանկական խնամակալական կազմակերպությունների

բեռնաթափման ծրագիրը, Մանկատան չափահաս դարձած սաների բնակարանային ապահովման ծրագիրը և այլն: Նույն տարում ընդունվեց նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այն 2013 թվականին համանուն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել), որով սահմանվեց նաև անչափահասների հետ կապված մի շարք դատավարական առանձնահատուկ ընթացակարգեր,

2008 թվականին հաստատվեցին երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության վճարման կարգն ու չափը և խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը,

2010 թվականին հաստատվեցին որդեգրման կարգը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը,

2011 թվականին հաստատվեց խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը,

2012 թվականին հաստատվեցին ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը,

2013 թվականին մշակվեցին ՀՀ-ում բազմազավակ ընտանիքների աջակցության պետական ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը,

2014 թվականին ընդունվեց Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքը «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեցին հատուկ կատեգորիայի երեխա զոհերի աջակցության հետ կապված հարցերը: Նույն տարում հաստատվեցին նաև ՀՀ խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպելու (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը, ՀՀ պետական

մանկատների շրջանավարտներին պետական աջակցության ծրագիրը, ինչպես նաև հավանություն տրվեց երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին և դրանից բխող միջոցառումների ցանկին,

2015 թվականին սահմանվեցին երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները,

2015 թվականին հաստատվեց Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը

2016 թվականին հավանություն տրվեց կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին, ինչպես նաև հաստատվեցին կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները

2016 թվականին հաստատվեց խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը

2016 թվականին ձևավորվեց Ազգային մակարդակում աջակցության ցանցը, որին միացան շուրջ 40 կազմակերպություններ:

1.1.2 ՀՀ Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը

ՀՀ Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված բարեփոխումների առանցքային գործիքը պետք է հանդիսանար ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի (ԻՄՕՀ) ներդրումն ու շահագործումը: ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 26-ի N 952-Ն որոշմամբ ընդունվեց համապատասխան ծրագիրը¹:

<<Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագիրը>> ֆինանսավորվում է Համաշխարհային բանկի կողմից: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է մոտ 25 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որը վարկային միջոցներ են:

Նոր համակարգի ներդրումը պայմանավորված էր մի շարք հրատապ գործոններով՝ սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետության բարձրացում, սոցիալական աշխատանքի վերաբերյալ հասարակական կարծրատիպերի փոփոխում, հաճախորդի կարիքների համապարփակ գնահատման և դրանց բավարարման ուղղությամբ շարունակական միջոցառումների իրականացում: ԻՄՕՀ-ի ներդրումը նշանակում էր նոր որակի ծառայությունների տրամադրում, հաճախորդի սոցիալական վիճակի վրա ներազդելու սկզբունքորեն նոր մեթոդների և մեխանիզմների կիրառում: Այս համակարգի ներդրմամբ մասնավորապես, նախատեսվում է սոցիալական պաշտպանության ոլորտում անցում կատարել դեպի ակտիվ, նախաձեռնողական քաղաքականության իրականացմանը, որի շրջանակներում հետևանքները վերացնելուն միտված պասիվ ծրագրերի (դրամական վճարներ, արտոնություններ) հաշվին ընդլայնվում են սոցիալական անբավարարվածություն (սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն) ծնող պատճառները վերացնելուն և կանխարգելելուն միտված ծրագրերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանխարգելումը շատ ավելի արդյունավետ և նվազ ծախսատար է: Արդյունքում, սոցիալական պաշտպանության

¹ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2012/07/12_0952.pdf,

ուրորտը, զուտ վերաբաշխման գործառույթ կատարելու փոխարեն նպաստելու է մարդկային կապիտալի զարգացման միջոցով տնտեսական աճի ապահովմանը²:

Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ <<ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը (ԻՄՕՀ) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, սոցիալական աջակցության շրջանակներում նրանց կողմից իրականացվող գործառույթների (լիազորությունների) և միջոցառումների ամբողջությունն է: ԻՄՕՀ-ն համագործակցության ապահովման միջոցով կանխարգելում է անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը, վերացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառները և հետևանքները>>³:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի հիմնական բաղադրիչներն են՝

- 1) լիազորած պետական մարմինը.
- 2) միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերը.
- 3) աջակցող ցանցը (սույն օրենքով սահմանված սոցիալական համագործակցության համաձայնագրի կողմերը).
- 4) համալիր կենտրոնը.
- 5) տարածքային մարմինները.
- 6) միասնական տեղեկատվական համակարգը:

1.1.3 ՀՀ ինտեգրված սոցիալական ծառայությունների հիմնական գործառույթներն են

1) անձի (ընտանիքի կամ այլ սոցիալական խմբի) սոցիալական կարիքների համալիր գնահատումը և այդ կարիքները բավարարելու նպատակով հասանելի ռեսուրսների որոնումը,

2) անհատական ծրագիր կազմելը և դրա իրականացումն ապահովելը,

² ՀՀ ԱՄՀ, Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման փորձնական ծրագրի հիմնական իրավական ակտերի ժողովածու, Երևան 2013, էջ 8

³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94972>, Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք, Հոդված 33

3) մեկ պատուհանի սկզբունքով սոցիալական կարիքներին համարժեք տարատեսակ սոցիալական ծառայությունները համակցված մատուցելը կամ դրանց համակցված մատուցումը կազմակերպելը,

4) անձի (ընտանիքի կամ այլ սոցիալական խմբի) սոցիալական կարիքները բավարարելու ուղղությամբ միջգերատեսչական համագործակցությունն ու սոցիալական համաձայնագրի շրջանակներում աջակցող ցանցի, համագործակցությունը (այդ թվում՝ այդ համագործակցությունն ապահովելը).

5) տեղական սոցիալական ծրագրեր կազմելը և իրականացնելը,

6) անձի (ընտանիքի կամ այլ սոցիալական խմբի) սոցիալական կարիքների համալիր գնահատման հիման վրա սույն հոդվածի 1-ին մասում նշված նպատակներով իրականացվող այլ ծրագրերն ու միջոցառումները:

5. Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումն ապահովում է լիազորած պետական մարմինը: Տարածքային մարմնի սպասարկման տարածքի բնակչությանն ինտեգրված սոցիալական ծառայությունները տրամադրում են տարածքային մարմինները:

1.1.4 Դեպքի վարում. ԻՄՕՀ-ի ներդրման առանցքային գործիքներից մեկը դեպքի վարման ինստիտուտի ներդրումն էր. << համագործակցության և հասանելի ռեսուրսների որոնման միջոցով և անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման հիման վրա իրականացվող գործընթաց է, որը ներառում է սոցիալական աջակցություն ստացողների կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի ծրագրավորումը, դրանք ստանալու հարցում աջակցությունը՝ նպատակ ունենալով բավարարել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները>>⁴:

Սոցիալական դեպքի վարումն անձի սոցիալական կարիքների առկայության պայմաններում պլանավորման եղանակով այդ կարիքներին համարժեք ահրաժեշտ աջակցության տրամադրումը կազմակերպելու և համակարգելու գործընթացն է, որում միավորվում են սոցիալական դեպք վարողի կազմակերպության և սոցիալական համագործակցության ցանցի անդամ այլ կազմակերպությունների և անհատների կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունները, այդ թվում՝

⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94972>, Հոդված 2, 17-րդ ենթակետ

դրամական օգնությունները: Դեպքի վարումը հիմնականում ընդգրկում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ այդպիսի իրավիճակում հայտնվելու վտանգի տակ գտնվող անձանց, սոցիալական հոգածության ապահովման համար հնարավոր բոլոր միջոցառումների կազմակերպումը: Դեպքի վարման ընթացքում տրամադրված համալիր սոցիալական ծառայությունները հնարավորինս պետք է ներառեն հաճախորդի կարիքների ողջ բազմազանությունը և հաշվի առնեն այդ կարիքների փոփոխությունը ժամանակի ընթացքում⁵:

Դեպք վարողը աջակցում է հաճախորդներին և նրանց մասին հոգ տանող անձանց, հաղթահարելու որոշակի ընթացակարգերի կամ սահմանափակ անձնական ռեսուրսների հետ կապված, այդ թվում՝ տնտեսական և մշակութային բնույթի խոչընդոտները, ինչպես նաև օգտվելու անհրաժեշտ սոցիալական ծառայություններից, հետևում է տարբեր մարմինների կողմից մատուցվող սոցիալական ծառայությունները պատշաճ, ժամանակին տրամադրելու գործընթացին: Դեպքի վարումը սկսվում է սոցիալական կարիքների գնահատման գործընթացից:

Սոցիալական կարիքների գնահատումն իրենից ենթադրում է հաճախորդի սոցիալ-կենցաղային, սոցիալ-տնտեսական, ընտանեկան պայմանների, նյութական ապահովվածության վիճակի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության հավաքագրում, օբյեկտիվ և մասնագիտական գնահատումների և համապատասխան անձանց սուբյեկտիվ գնահատականների համադրում: Սոցիալական կարիքների գնահատման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները չեն կարող օգտագործվել դրանց ձեռքբերման նպատակից զատ այլ նպատակներով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Դեպք վարողը սոցիալական դեպքի վարման արդյունքներով կազմում է **անհատական սոցիալական ծրագիր (այսուհետ՝ անհատական ծրագիր)**, որում ներառվում են սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տեսակներն իրենց տրամադրման ժամկետով, ակնկալվող արդյունքով, ինչպես նաև սոցիալական դեպքի շարունակական հսկողության ժամանակացույցը:

⁵ <http://www.esocial.am/am/innercasemanagementen>, Բնտեգրված սոցիալական ծառայություններ

Սոցիալական դեպք վարողի ինստուտը դեռևս ունի անցնելու զարգացման լուրջ ճանապարհ պայմանավորված որակյալ կադրերի պատրաստման անհրաժեշտությամբ, ինչպես նաև հասարակական մտածողության փոփախությամբ: Դեպք վարողին պետք է հատկացվեն նաև գործուղման անհրաժեշտ միջոցներ և ապահովեն աշխատանքի այնպիսի պայմաններ, որ նա հանդես գա օգնողի և ոչ թե օժանդակվողի կարգավիճակում⁶: Փաստացի դեպք վարողին ճանապարհաձախս չի տրամադրվում: Առկա են նաև տեխնիկական սարքավորումների հագեցման խնդիրներ, օրինակ՝ մի շարք դեպք վարողների համակարգիչները լավ վիճակում չեն, տպիչ և լուսածիր (սկաներ) չունեն: Դեպք վարողները հիմնականում օգտվում են օվիրի բազայից, ամբողջական բազաներ չկան, որոնց շնորհիվ դեպքի վարման գործընթացն ավելի դյուրին կարելի էր կազմակերպել:

1.1.5 Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշմամբ հաստատվեց սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների լիազորությունների իրականացման և սոցիալական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները սահմանելու մասին որոշումը⁷: Որոշմանը նախորդել էր 2014 թվականին Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքի ընդունումը, որով սահմանվել են սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինները՝

ՀՀ ԱՍՀՆ-ի՝ աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնները (զբաղվածության տարածքային կենտրոնները), աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինները (բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները), կառավարման ոլորտում գործող պետական մարմնի՝ ՀՀ ԱՍՀՆ-ի սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի

⁶ Պետական բյուջեի մասին օրենքով սահմանվել էր 120 միլիոն ՀՀ դրամ գործուղումների համար, սակայն դրանք չեն տրամադրվում . . .

⁷ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=100588>,

տարածքային ստորաբաժանումները (սոցիալական ապահովության տարածքային կենտրոնները),

ՀՀ մարզպետարանների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումները՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները և սոցիալական աջակցության տարածքային բաժինները,

ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնները սոցիալական ծառայությունները տրամադրում են (իրենց լիազորություններն իրականացնում են) «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինները սոցիալական ծառայությունները տրամադրում են (իրենց լիազորություններն իրականացնում են) բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունների տրամադրման պայմաններն ու կարգը սահմանող՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: ՀՀ ՍԱՊԾ աշխատակազմի տարածքային ստորաբաժանումները սոցիալական ծառայությունները տրամադրում են (իրենց լիազորություններն իրականացնում են) «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» ու «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքներով, այլ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

1061 որոշմամբ սահմանվում է նաև ՀՀ մարզպետարանի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումների՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալության և սոցիալական աջակցության տարածքային բաժնի լիազորությունների իրականացման, սոցիալական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները: Տարածքային մարմինների լիազորությունները սահմանված են «ՀՀ աջակցության մասին օրենքի» 17 հոդվածում:

1.1.6. Միջգերատեսչական սոցիալական համագործակցություն

Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքում ամրագրվեց Սոցիալական համագործակցության համաձայնագրի գաղափարը, իսկ ՀՀ կառավարությունը 2015 թվականի սեպտեմբերի 10-ին N 1044-Ն որոշմամբ հաստատեց միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը: 2016 թվականից ՀՀ ԱՍՀՆ-ն ձեռնամուխ եղավ Ազգային և տարածքային մակարդակներում աջակցության ցանցերի ձևավորմանը, որին ակտիվորեն մաս կազմեցին նաև ՔՀԿ-ները:

1.1.7 Համաձայնագիր⁸. Սոցիալական համագործակցության համաձայնագիրն (այսուհետ՝ համաձայնագիր) ընդունվում է ազգային և տարածքային մակարդակներում: Համաձայնագրի ընդունումը ազգային մակարդակում կազմակերպում է լիազորված պետական մարմինը, իսկ տարածքային մակարդակում՝ լիազորված պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինը: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում համագործակցությունն իրականացվում է աջակցող ցանցի միջոցով՝ տարածքային մակարդակում ընդունված համաձայնագրի հիման վրա: Աջակցող ցանցում ներառվում են տարածքային մարմինները, իսկ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև ֆիզիկական անձինք (այսուհետ՝ աջակցող ցանցի մասնակից) միանում են կամավոր հիմունքներով:

Ա) Համագործակցության հիմնական նպատակներն են՝

1) սոցիալական ծառայությունների համալիր և ամբողջական տրամադրման ապահովումը.

2) սոցիալական աջակցության անհրաժեշտություն առաջացնող գործոնների, դրանց փոխկապակցվածության և պատճառահետևանքային կապերի բացահայտումը, բացասական ազդեցության չեզոքացումը.

⁸ http://www.mlsa.am/?page_id=2841, Տես համաձայնագրի ամբողջական տեքստը

3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությունը և նման իրավիճակում նրանց հայտնվելու կանխարգելումը.

4) սոցիալական ծառայությունների մատչելիության և կողմնորոշման բարձրացումը դեպի սոցիալական աջակցություն ստացողները, դրանց որակի բարելավումը, սոցիալական համախմբվածության ամրապնդումը՝ խոցելի խմբերի սոցիալական մեկուսացվածությունը նվազեցնելով.

5) սոցիալական դեպքի վարման շրջանակներում փոխգործակցության ապահովումը, սոցիալական դեպքի վարման գործընթացի արդյունավետության մեծացումը.

6) ռեսուրսների արդյունավետ ներգրավմամբ և օգտագործմամբ սոցիալական ծառայությունների տրամադրումը.

7) արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալական աջակցություն ստացողի խնդիրներին արագ արձագանքման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների անհապաղ տրամադրման հնարավորությունների ստեղծումը.

8) աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալական խոցելիության նվազեցումը.

9) սոցիալական ոլորտում սոցիալական աշխատանքի դերի ու նշանակության բարձրացումը.

10) վստահության մթնոլորտի ձևավորումը:

Բ). Համագործակցության հիմնական սկզբունքներն են՝

համակառավարումը, հավասար պատասխանատվությունը, թափանցիկության ապահովումը և ժողովրդավարությունը:

7. Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական իրավունքներն են՝

1) ստանալ տեղեկատվություն աջակցող ցանցի մյուս մասնակիցներից՝ իրենց կողմից իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին.

2) ակնկալել անհապաղ աջակցություն աջակցող ցանցի մասնակիցներից իրենց հնարավորությունների շրջանակում, սույն հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերում.

3) առաջարկություններ ներկայացնել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման նպատակով:

Գ). Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական պարտականություններն են՝

1) իրազեկել աջակցող ցանցի մյուս մասնակիցներին իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին.

2) արագ արձագանքել սույն հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերում՝ իրենց հնարավորությունների շրջանակներում.

3) մասնակցել համայնքների սոցիալական կարիքների վերհանման, ինչպես նաև դրանց համարժեք՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին.

4) համագործակցել սոցիալական դեպքի վարման շրջանակներում.

5) առաջարկություններ ներկայացնել աջակցող ցանցի մասնակիցներին՝ անհատական սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման համար:

ՀՀ բոլոր մարզերում արդեն ֆորմալ կերպով ձևավորվել են աջակցող ցանցեր: Դրանք պետք է հանդիսանային ՀՄՕՏԿ-ների շարժման լոկոմոտիվներ և ոչ պետական այլընտրանքային ռեսուրսների հայտնաբերման, բախշման և սոցիալական աջակցության օժանդակ կառույցներ, որոնք միավորում են պետական և ոչ պետական կառույցները: Մակայն աջակցող ցանցերը ակտիվ չեն գործում, իսկ սոցիալական աջակցության տարածքային մարմիններն ընդամենը կատարում են օրենքով սահմանված իրենց գործառույթները: Աջակցող ցանցերի պասիվության մասին խոսում է այն փաստը, որ դրանց գործունեության մասին հասարկությունն անիրազեկ է:

Միջգերատեսչական սոցիալական համագործակցությունն իրականացվում է սոցիալական աջակցության տրամադրման գործընթացում՝ տարածքային մարմինների, առողջապահական, կրթաուսումնական կազմակերպությունների, ոստիկանության տեղամասային տեսուչների և այլ շահագրգիռ կողմերի (այսուհետ՝ կողմեր) միջև: Միջգերատեսչական սոցիալական համագործակցությունն

իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կանոնակարգով, որով սահմանվում են՝

1) համագործակցող կողմերի ցանկը.

2) համագործակցող կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները.

3) միջգերատեսչական համագործակցության ձևերն ու կարգը.

4) խնդրահարույց այն դեպքերը, որոնք կարող են նախանշել անձի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելը կամ հայտնվելու հնարավորությունը, որոնց հայտնաբերման ժամանակ կողմերը պարտավորվում են տեղեկացնել համապատասխան տարածքային մարմնին.

5) համագործակցող կողմերի միջև տրամադրվող տեղեկատվության ծավալի, ձևի, տրամադրման ժամկետի մասին պահանջները.

6) մշտադիտարկման և գնահատման ընթացակարգը:

Միջգերատեսչական համագործակցության ամբողջական ցանկը տես հավելված 1-ում:

1.1.8 Տեղական սոցիալական ծրագրեր. Տեղական սոցիալական ծրագրերը կազմվում են տարածքային առանձնահատկությունների, տարածքում առկա խնդիրների հաշվառմամբ՝ կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքով՝ համայնք(ներ)ի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա: **Ծրագրերը** մշակվում են համայնքի ղեկավարի կողմից, լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ գործընթացին մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչության ներկայացուցիչներին:

Տեղական սոցիալական ծրագրերը կարող են կազմվել մեկ համայնքի կամ մեկից ավելի համայնքների կողմից համատեղ՝ ընդհանուր խնդիրների լուծման և ընդհանրական սոցիալական կարիքների բավարարման նպատակով: Դրանք իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի կամ պայմանագրային հիմունքներով՝ համայնքում գործող աջակցող ցանցի մասնակցի կողմից:

Տեղական սոցիալական ծրագրերը կարող են ֆինանսավորվել՝

1) համայնքի բյուջեի միջոցներից.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացրած միջոցներից.

3) սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայություններից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին:

Տեղական սոցիալական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցությունը տրամադրվում է օրենքով սահմանված սկզբունքների համաձայն, համայնքի ավագանու հաստատած կարգով՝ սոցիալական աջակցություն ստացողի անհատական ծրագրին համապատասխան:

1.2. Խնամակալության և հոգաբարձության մարմիններ

1.2.1 Իրավաօրենսդրական դաշտ. Ինչպես նշեցինք 1999 թվականից վերսկսվեց Խնամակալության և հոգեբարձության մարմինների աշխատանքները (ԽՀՄ): ԽՀՄ-ներն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, «Երեխայի իրավունքների մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ կառավարության կողմից հաստատված համապատասխան կանոնադրությամբ⁹:

ԽՀՄ-ների որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ իրենց վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ենթարկվում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով¹⁰:

1.2.2 Համագործակցության մեխանիզմ. ԽՀՄ-ները համայնքների ղեկավարներն են: ԽՀՄ-ներն իրենց իրավասությունների շրջանակներում, ըստ անհրաժեշտության, համագործակցում են ՀՀ մարզպետարանների, ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշմամբ սահմանված՝ իրենց սպասարկման տարածքների սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների), զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հաստատությունների, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների, ՀԿ-ների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015

⁹file:///C:/Users/Intel/Desktop/%D4%B5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B5%D5%AB%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80/DocumentView.html

¹⁰ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=65976>, Այս դրույթն ամրագրված է ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի 161 Ն որոշման Ընդհանուր դրույթների 11-րդ ենթակետում, սակայն հստակ չէ թե ինչպիսի պատասխանատվության են ենթարկվում:

թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական սոցիալական համագործակցության մյուս կողմերի հետ:

ԽՀՄ-ները երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի ու փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն, աջակցություն ու տեղեկատվություն ստանում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Խնամակալության և հոգաբարձության մարմիններն անհրաժեշտ խորհրդատվություն, աջակցություն ու տեղեկատվություն կարող են ստանալ նաև մարզպետարաններից, ինչպես նաև մասնագիտական համապատասխան որակավորում ունեցող անհատ փորձագետներից և այդ ոլորտում գործունեություն իրականացնող ՀԿ-ներից ու հիմնադրամներից:

1.2.3 Խնամակալության և հոգաբարձության մարմինների խնդիրները. ԽՀՄ-ների հիմնական խնդիրներն են անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, երեխայի՝ ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումը, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ նրանց հրատապ օգնության, անհրաժեշտության դեպքում նաև անհապաղ տեղավորման ապահովումը և այլն:

ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության համակարգում առանցքային դերակատարում ունեցող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները արդյունավետ գործունեություն ծավալելու առումով ունեն մի շարք լուրջ հիմնախնդիրներ, որոնք ամրագրվել են ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016թթ ռազմավարական ծրագրում¹¹, մասնավորապես՝

1) առկա է օրենսդրական հստակեցման անհրաժեշտություն, հատկապես խնամակալության և հոգաբարձության ինստիտուտի կարգավորման, ինչպես նաև

¹¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94050>, ՀՀ կառավարության որոշում 2012թ. դեկտեմբերի 27, N 1694 Ն, Տես խմբագրված տարբերակը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94017>, ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 13-ի N 1273-Ն որոշում

խնամակալների և հոգաբարձուների մասնագիտական պատրաստվածության և վերջիններիս գործունեության թափանցիկության ապահովման առումով.

2) խնամակալության և հոգաբարձության մարմինները, այդ թվում՝ դրանց առընթեր ձևավորվող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները կազմված են հասարակական հիմունքներով աշխատող 5-8 անձանցից, որոնց համար այդ աշխատանքը հիմնական բնույթ չի կրում: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքի բնույթը արդարացվում է միայն որոշումներ կայացնելու կոլեգիալության տեսանկյունից, սակայն սոցիալական ծառայություններ մատուցելու որակի և խնդիրների բովանդակային լուծման տեսանկյունից նման կառուցվածքը խիստ անհամապատասխան է սահմանված գործառույթներին, քանի որ որոշումների մեծ մասը կայացվում է՝ առանց կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի կամ նրա ընտանիքի հիմնախնդիրների խորքային ուսումնասիրության և հետագա հետևողական աշխատանքի.

3) խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները, հատուկ իրավական գիտելիքների և հմտությունների բացակայության պատճառով, հաճախ չեն կարողանում դատարանում պատշաճ կերպով պաշտպանել իրենց համայնքի բնակիչների իրավունքներն ու շահերը.

4) այդ հանձնաժողովները, ունենալով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ինքնուրույն հայտնաբերելու, նրանց մասին հոգ տանելու, նրանց հաշվառումը վարելու, խնամքի կազմակերպման և իրականացման հարցերով հատուկ դպրոցների ու երեխաների խնամքի ու պաշտպանության այլ հաստատությունների հետ համագործակցելու կանոնադրական խնդիր, չունեն համապատասխան ռեսուրսներ՝ դրանց պատշաճ իրականացումն ապահովելու համար.

5) խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին կարևոր դեր է վերապահված երեխաների խնամքի կազմակերպման, ինչպես նաև տեսակցությունների սահմանման վերաբերյալ իրարից անջատ ապրող ծնողների միջև առաջացած վեճերը, գույքային խնդիրները, խնամակալի թեկնածությունը և այլ հարցեր դատական կարգով լուծելիս, սակայն, այդ գործառույթները ևս գրեթե չեն իրականացվում.

6) խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները գործնականում չեն վերահսկում խնամակալության տրված երեխաների իրավունքների պաշտպանության հետագա կազմակերպումը խնամակալի կողմից և վերջիններիս էլ որևէ աջակցություն չեն տրամադրում, խնամակալություն նշանակելիս հիմնականում խնամակալ ընտանիքի կարողությունների խոր գնահատում չեն իրականացնում, ինչի պատճառով երեխաները հաճախ հայտնվում են գիշերօթիկ հաստատություններում:

7) խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները հիմնականում իրականացնում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին վերաբերող վարչարարական-փաստաթղթային բնույթի գործառույթներ:

1.2.4 ԽՀՄ-ների գործառույթները. ԽՀՄ-ները ՀՀ օրենքով սահմանված դեպքերում սահմանում են խնամակալություն տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ, հոգաբարձություն 14-18 տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ: ԽՀՄ-ները իրենց գործառույթների շրջանակներում իրականացնում են՝

ա. երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում,

բ. համայնքի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 962-Ն որոշմամբ սահմանված կարգով,

գ. խնամատար ծնողների ընտրությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ,

դ. «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ, 16-րդ, 60-րդ կետերով և N 2 հավելվածի 65-րդ ու 66-րդ կետերով սահմանված գործառույթները,

ե. խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունները մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը,

զ. հսկողություն խնամակալների և հոգաբարձուների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ մշտադիտարկումների միջոցով,

է. վերահսկողություն խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ, այդ թվում՝ մշտադիտարկումների միջոցով,

ը. երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն:

ԽՀՄ-ները ապահովում են ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքը՝ ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը (կենսաբանական ընտանիք վերադարձնելը կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը կամ խնամատար ընտանիքում տեղավորելը կամ որդեգրումը կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելը), թույլատրում են՝ հոգաբարձուին 16 տարին լրացած խնամարկյալից առանձին ապրել, եթե դա բացասաբար չի անդրադառնա խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների և շահերի պաշտպանության վրա, ծնողական սահմանափակված իրավունքներով ծնողներին երեխայի հետ շփումը, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա, խնամակալին կնքել, իսկ հոգաբարձուին՝ համաձայնություն տալ կնքելու խնամարկյալի գույքի օտարման՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, գույքը գրավ դնելու գործարքներ, որոնք հանգեցնում են խնամարկյալին պատկանող իրավունքներից հրաժարվելուն, նրա

գույքը բաժանելուն կամ դրանից բաժիններ առանձնացնելուն կամ խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարքների, ինչպես նաև վարձակալության, այդ գույքն անհատույց օգտագործման հանձնելու գործարքներ.

ԽՀՄ-ները աշխատանքներ են տանում հետևյալ խնդիրների բացահայտման ուղղությամբ՝

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկությունները,
- ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքերը և ապահովում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը,
- համայնքներում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության դեպքերը և դրա մասին իրազեկում մարզպետին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին), միաժամանակ նախաձեռնում դրանց պետական գրանցման գործընթացը.

- հաշվի են առնում 10 տարին լրացած երեխայի կարծիքը՝ նրա իրավունքներին և շահերին առնչվող ցանկացած հարց քննարկելիս և որոշում կայացնելիս, երեխային վերաբերող բոլոր հարցերում պատշաճ ուշադրության են արժանացնում իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համոզմունքներն ու կարծիքը՝ նրա տարիքին և հասունությանը համապատասխան.

- «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանն իրազեկում են համայնքներում երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի մասին.

- ընտրում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքներում տեղավորելու ձևերը (խնամակալ, հոգաբարձու նշանակելը, խնամատար ընտանիքում խնամքի և դաստիարակության հանձնելը)՝ ելնելով երեխայի օրինական շահերի ապահովման սկզբունքից, ինչպես նաև ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից.

Մասնակցություն դատական նիստերին.

- դատարանում երեխաների որդեգրման հաստատմանը և որդեգրման վերացմանը վերաբերող գործերի քննությանը,

- երեխայից առանձին ապրող ծնողի ծնողական իրավունքների իրականացման հարցում ծագած կամ երեխայի դաստիարակության հետ կապված վեճերը քննող դատական նիստերին,

- դատարանում ծնողական իրավունքների սահմանափակման մասին գործերի քննությանը,

- դատարանում ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերի քննությանը,

- դատարանում ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերի քննությանը,

- դատարանում 16 տարեկան դարձած անչափահասին լրիվ գործունակ (էմանսիպացված) ճանաչելու մասին գործերի քննմանը՝ օրենքով սահմանված դեպքերում,

- երեխաների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի դատաքննությանը,

- քրեական վարույթում՝ որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ.

Աջակցում են՝

ա. խնամատար ընտանիքին՝ երեխայի կյանքի և դաստիարակության անհրաժեշտ պայմանների ստեղծման համար,

բ. երեխային խնամատար ընտանիքում ինտեգրվելուն, ինչպես նաև երեխայի կենսաբանական ընտանիք վերադարձնելու գործընթացին,

գ. խնամակալներին ու հոգաբարձուներին խնամարկյալների խնամքի և դաստիարակության, նրանց հանգիստը կազմակերպելու գործում,

դ. երեխային մանկավարժահոգեբանական կենտրոն ուղղորդելուն՝ համագործակցելով ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի հետ.

11) քննության են առնում խնամակալների և հոգաբարձուների գործողությունների կամ անգործության մասին դիմումներն ու բողոքները.

12) լուծում են ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները.

13) քննարկում են ընտանիքի, կանանց և երեխաների, ինչպես նաև համայնքում կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների վերաբերյալ առկա հիմնախնդիրները.

14) նշանակում են քաղաքացու օգնական (պատրոն)՝ այն չափահաս գործունակ քաղաքացու խնդրանքով և համաձայնությամբ, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները.

15) կատարում են համայնքում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության վիճակի մշտադիտարկում՝ ընդհանուր առմամբ և համայնքում բնակվող այն ընտանիքների հայտնաբերում, որոնցում առկա է երեխայի իրավունքների կամ շահերի խախտման վտանգ և այդ ընտանիքներում ապրող երեխաների իրավիճակի հատուկ մշտադիտարկում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալության կամ բաժնի, հանրակրթական ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, ընդ որում մշտադիտարկման ժամկետները և հաճախականությունը սահմանվում են ըստ կարիքի՝ ելնելով իրավիճակից, որի մասին ամեն երեխայի համար ընդունվում է առանձին որոշում, իսկ դրանց արդյունքները, ըստ անհրաժեշտության, կարող են ներկայացվել և քննարկվել երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովում.

16) իրականացնում են աշխատանքներ երեխաների իրավունքների խախտումները և շահերի ոտնահարումները կանխարգելելու նպատակով՝ համայնքում երեխաների ու ծնողների հետ, ինչպես նաև խնամք տրամադրող ու կրթական հաստատություններում իրազեկող հանդիպումների և միջոցառումների կազմակերպման ու անցկացման միջոցով՝ այդ նպատակով համագործակցելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ

Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի հետ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ներգրավելով հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և անհատ փորձագետների, ընդ որում, հանդիպումների քանակը, հաճախականությունը, ժամկետները որոշելիս և ծրագրերը կազմելիս հաշվի են առնվում համայնքի կարիքները, առանձնահատկություններն ու երեխաների իրավունքների վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը.

17) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարան են ներկայացնում երեխայի ու նրա դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի հետազոտության ակտը և դրա հիման վրա՝ վեճի էության մասին եզրակացությունը.

18) կնքում են՝

ա. գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր իր կողմից նշանակված կառավարչի հետ՝ խնամարկյալի անշարժ և արժեքավոր շարժական գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում,

բ. պայմանագիր խնամատար ծնողների (ծնողի) հետ երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշմանը համապատասխան.

19) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում նշանակում են անհայտ բացակայող ճանաչված անձի գույքի կառավարիչ՝ վերջինիս հետ կնքելով հավատարմագրային կառավարման պայմանագիր.

20) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 45-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում դիմում են դատարան՝ անձին մահացած ճանաչելու համար.

21) խնամակալին կամ հոգաբարձուին ազատում են իր պարտականությունների կատարումից՝

ա. երեխային իր ծնողներին վերադարձնելու կամ նրան որդեգրելու դեպքում,

բ. խնամարկյալին համապատասխան դաստիարակչական, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, բնակչության սոցիալական պաշտպանության կամ

նմանօրինակ այլ հաստատությունում տեղավորելիս, եթե դա չի հակասում խնամարկյալի շահերին,

գ. հարգելի պատճառների (հիվանդություն, գույքային դրության փոփոխություն, խնամարկյալի հետ փոխըմբռնման բացակայություն և այլն) առկայության դեպքում՝ խնամակալի կամ հոգաբարձուի խնդրանքով,

դ. խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականություններն անպատշաճ կատարելու՝ ներառյալ խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերում՝ միաժամանակ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով նրան օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար.

22) երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում երեխային վերցնում են ծնողներից կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, անհապաղ ապահովում են երեխայի ժամանակավոր տեղավորումը և 7-օրյա ժամկետում դիմում դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով.

23) դիմում են դատարան 14-18 տարեկան երեխայի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը սահմանափակելու կամ նրան այդ իրավունքից զրկելու միջնորդությամբ.

24) կարգավորում են անչափահաս ծնողների և երեխայի խնամակալի միջև առաջացած տարաձայնությունները.

25) մերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների կամ նրանցից մեկի մերժման դեպքում կարող են պարտավորեցնել ծնողներին կամ նրանցից մեկին չխանգարելու այդ շփմանը.

26) օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում են խնամակալների ու հոգաբարձուների.

27) երեխայի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ ընդունում են որոշում անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (Էմանսիպացիա) մասին.

28) ընդունում են որոշում ընտրված երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշման համաձայն.

29) տալիս են համաձայնություն անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս՝ վերջինիս ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում.

30) «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դեպքում կայացնում են որոշում առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու վերաբերյալ՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) եզրակացության հիման վրա.

31) իրենց գործառույթներն իրականացնելիս հաշվի են առնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական սոցիալական համագործակցության որևէ կողմից ստացված մասնագիտական եզրակացությունը տվյալ խնդրի վերաբերյալ, իսկ այն հաշվի չառնելու դեպքում իրենց որոշման մեջ անդրադառնում են այդ փաստին՝ նշելով այն հանգամանքները (հիմնավորումները, մրցակցող շահերը և իրավունքները, ուշադրության արժանի այլ հանգամանքներ), որոնք հիմք են հանդիսացել միջգերատեսչական սոցիալական համագործակցության որևէ կողմից ստացված մասնագիտական եզրակացությունը մասամբ կամ ամբողջությամբ հաշվի չառնելու համար, ինչպես նաև կարող են առաջարկել եզրակացության վերանայում կամ այլընտրանքային եզրակացություն՝ ներկայացված այլ մասնագետի կողմից.

32) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենքներով իրենց վերապահված այլ լիազորություններ:

10. Երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինները շարունակում են երեխային իր կենսաբանական ընտանիք վերադարձնելու կամ խնամակալություն սահմանելու, կամ որդեգրելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրանց անհնարինության դեպքում՝ ընտանեկան միջավայրում որևէ այլ միջոցով խնամք ապահովելու ուղղությամբ աշխատանքները՝

համագործակցելով Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների), «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ աջակցող ցանցի այլ անդամների, ինչպես նաև երեխաներին խնամք տրամադրող՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների և այլ կազմակերպությունների հետ:

1.2.5 ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման համաձայն ԽՀՄ-ներին կից ձևավորվում են Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ: Հանձնաժողովների ստեղծման նպատակն է աջակցել ԽՀՄ-ներին իրենց գործառույթների իրականացման հարցում: Հանձնաժողովները խորհրդակցական մարմիններ են և գործում են հասարակական հիմունքներով:

Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել երեքից մինչև ինն անձ, մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև ՀԿ ներկայացուցիչներ:

Հանձնաժողովի կազմը հաստատում է համայնքի ավագանին՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն¹²: Հանձնաժողով ստեղծելու և դրա

¹² <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66138>

Յոթերորդ 109. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը

1. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, վարում են նման երեխաների հաշվառումը և, ելնելով ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից, ընտրում են այդ երեխաներին տեղավորելու ձևերը:

անհատական կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ սահմանվում է նաև հանձնաժողովի նախագահը, ով իր հերթին, հանձնաժողովի կազմից նշանակում է հանձնաժողովի նախագահի տեղակալ և քարտուղար: Հանձնաժողովը կարող է ունենալ աշխատակարգ, որը հաստատվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից, այն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի (հասցեն, սենյակը կամ դահլիճը) մասին և համապատասխան տեղեկատվություն է փակցնում տեղական ինքնակառավարման մարմնի նստավայրի հայտարարությունների վահանակին:

ԽՀՄ-ի առաջարկով, հանձնաժողովը կազմում ու ԽՀՄ է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրակացություն, որն արտացոլում է քննարկվող հարցի վերաբերյալ հանձնաժողովի դիրքորոշումը և ունի բացառապես խորհրդատվական բնույթ: Հանձնաժողովի անդամը հանձնաժողովի ընդհանուր դիրքորոշումից տարբերվող դիրքորոշում ունենալու դեպքում կարող է քննարկվող հարցի վերաբերյալ գրավոր ներկայացնել իր հատուկ դիրքորոշումը:

Հանձնաժողովի նիստերին կարող են ներկա գտնվել այն անձինք, որոնց վերաբերում է քննարկումը, նրանց օրինական ներկայացուցիչները և (կամ) լիազորված անձինք: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հանձնաժողովի նիստերին որպես դիտորդ կարող են ներկա գտնվել նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ այն անձի (անձանց) համաձայնության դեպքում, որին (որոնց) վերաբերում է տվյալ քննարկումը:

Խնամակալության և հոգաբարձության մարմիններից բացի, իրավաբանական և ֆիզիկական այլ անձանց, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման ուղղությամբ գործունեություն չի թույլատրվում:

2. Խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, որոնց անհատական կազմը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին: Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

1. 2.6 Մեթոդական ուղեցույց. ՀՀ ԱՍՀՆ նախարարի 2017 թ. հունվարի 31-ի 12-Ա/1 հրամանով հաստատվեց ԽՀՄ-ներին կից հանձնաժողովների մեթոդական ուղեցույցը, որի նպատակն է «աջակցել ԽՀՄ-ներին օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում ապահովելու երեխաների, ինչպես նաև անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը»¹³: ԱԾԽՄ երեխաների մասին տեղեկությունների ստանալու դեպքում ԽՀՄ-ները կից հանձնաժողովների միջոցով ուսումնասիրում են ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու համայնքում երեխայի ծննդյան փաստի օրենքով սահմանված կարգով չգրանցման, երեխաների մահացության, համայնքում երեխաների հանդեպ բռնության, թրաֆիքինգի և այլ դեպքերը, ինչպես նաև մասնակցում է դատական գործերի քննությանը:

¹³ ՀՀ ԱՍՀՆ նախարարի 2017 թ. Հունվարի 31-ի 12-Ա/1, 2-րդ կետ

ԳԼՈՒԽ 2

Արմավիր և Արարատ մարզերում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները

2.1. Իրականացված դաշտային աշխատանքների ընդհանուր նկարագրություն

Հետազոտական առարկայի, որն է Արմավիր և Արարատ մարզերում ընտանիքներին մատուցվող սոցիալական աջակցության գործընթացների առանձնահատկությունների և հիմնական խնդիրների, ուսումնասիրության նպատակով իրականացվել են խորին հարցազրույցներ տարածքային մարմինների աշխատակիցների՝ մասնավորապես դեպք վարողների, ԽՀՄ-ների անդամների և հասարակական կազմակերպությունների աշխատակիցների շրջանում: Դաշտային աշխատանքների ընթացքում իրականացվել է 6 խորին հարցազրույց ՍՍՏԳ-ների աշխատակիցների շրջանում, 3 խորին հարցազրույց՝ ՋՏԿ-ների աշխատակիցների շրջանում և 7 խորին հարցազրույց՝ հասարակական կազմակերպությունների աշխատակիցների շրջանում:

Աջակցության համակարգի զարգացման և բարելավման առաջարկությունների ձևավորման նպատակով իրականացվել է երկու ֆոկուս խմբային հարցազրույց՝ մեկ խմբային հարցազրույց Արարատի մարզում և մեկ խմբային հարցազրույց Արմավիրի մարզում, որոնց մասնակցել են հիմնախնդիրը կրող բոլոր շահագրգիռ կողմերը՝ ներառյալ տարածքային մարմինների և հասարակական կազմակերպությունների ղեկավարները:

Ստացված դաշտային տվյալների ներկայացում

Սոցիալական պաշտպանության ոլորտի վիճակագրական տեղեկատվություն Արարատի մարզի վերաբերյալ

Արարատի մարզի ընդհանուր բնակչության թիվը 2017 թվականին կազմել է 258.000 մարդ: Արարատի մարզում 2015 թ-ին աղքատության մակարդակը կազմել է 27.3%, որից 1.3%-ը ծայրահեղ աղքատ է: Արարատի մարզում հաշվառված է 19.739 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից 10.739-ը կին է: Տաս հազար բնակչի հաշվարկով համայնքում առկա է առավել քան 435 գրանցված գործազուրկ, 1434 թոշակառու, աղքատության նպաստ ստացող 329 ընտանիք:

**Սոցիալական պաշտպանության ոլորտի վիճակագրական տեղեկատվություն
Արմավիրի մարզի վերաբերյալ**

Արմավիրի մարզի ընդհանուր բնակչության թիվը կազմում է 266.600 մարդ: Արմավիրի մարզում հաշվառված է 13106 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից 6113-ը կին են: 2015 թ-ին աղքատության մակարդակը մարզում կազմել է 29.6%, որից 2.1%-ը ծայրահեղ աղքատ է: Տաս հազար բնակչի հաշվով 1275-ը թոշակառու են, 638-ը գործազուրկ են, աղքատության ընտանեկան նպաստ ստանում է 222 ընտանիք:

Ներկայումս Արարատի մարզում գործում են չորս համալիր կենտրոններ՝ Արարատի, Արտաշատի, Մասիսի, Վեդու, իսկ Արմավիրի մարզում՝ երկու՝ Արմավիրի ու Բաղրամյանի: Յուրաքանչյուր համալիր կենտրոնում գործում է ավելի քան տասնհինգ

Արմավիր մարզի Արմավիր քաղաքի ՍՍՏԳ-ն 2017 թ-ին մշակել է 757 անհատական ծրագիր, որոնցից 15-ը դիտարկում է որպես առավել ծանր դեպքեր:

աշխատակից, որոնցից երեքից հինգը դեպք վարողներ են: Այդպիսով Արարատի մարզում ՍՍՏԳ-ների դեպք վարողների թիվը հասնում է մինչև քսանի, իսկ Արմավիրի մարզում՝ տասի: Արարատի մարզում յուրաքանչյուր դեպք վարողի բաժին է ընկնում ավելի քան տասներկու հազար

բնակիչ, եթե հաշվարկը իրականացնում ենք մարզի ամբողջ բնակչության շրջանակներում: Եթե հաշվարկը իրականացնենք նպաստառու ընտանիքների թվաքանակով, ապա յուրաքանչյուր դեպք վարողին բաժին է ընկնում ավելի քան 100 նպաստառու ընտանիք:

Տարածքային կենտրոնների ՍՍՏԳ-ները հիմնականում համագործակցում են ՁՏԿ-ների հետ՝ իրականացնելով ուղղորդումներ՝ շահառուների շրջանում գործազրկության մակարդակը իջեցնելու նպատակով: Համալիր կենտրոններում նկատվում է միջգերատեսչական համագործակցության ցածր մակարդակ, իսկ բազմամասնագիտական խմբեր կազմելու փորձը անհատական սոցիալական ծրագրի մշակման և իրականացման շրջանակներում բացակայում է: ԽՀՄ-ի և ՍՍՏԳ-ի միջև համագործակցության մասնակի դեպքեր են առկա: Հիմնականում ԽՀՄ-ների և

ՄԱՍԳ-ի միջև աշխատանքային շրջանակներում համագործակցային հարաբերությունները բացակայում են:

Հասարակական կազմակերպությունների և տարածքային մարմինների միջև համագործակցությունը կրում է ոչ մշտական և համակարգված բնույթ: ՄԱՍԳ-ի աշխատակիցները չեն տիրապետում ամբողջական տեղեկատվության հասարակական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ և նշել են մասնակի դեպքեր, երբ շահառուներին ուղղորդել են այս կամ այն մարզային հասարակական կազմակերպություն:

Արմավիրի մարզում գործում է յոթ հասարակական կազմակերպություն, որոնցից չորսը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցությանը, երկուսը՝ դժվարին իրավիճակում հայտնված երեխաների աջակցությանը: Արմավիր քաղաքում գործում է նաև «Արևածագ երեխաների աջակցության կենտրոնը», որի գործունեությունը ևս ուղղված է հաշմանդամություն ունեցող երեխաներին առողջապահական, սոցիալական և հոգեբանական ծառայությունների մատուցմանը: Այսպիսով, մարզի հասարակական կազմակերպությունների հիմնական մասը ուղղված են երեխաների աջակցությանը, իսկ այլ խոցելի խմբերը (ընտանեկան բռնության զոհերը, հաշմանդամություն ունեցող չափահաս անձիք, ակոհոլային կամ թմրանյութային կախվածություն ունեցող անձիք, տարեցները, առանց մշտական բնակության վայրի անձիք...) դուրս են մնացել մարզի ոչ պետական սոցիալական աջակցության համակարգից: Հետևաբար, Արմավիրի մարզում էլ ավելի մեծ նշանակություն ունի պետական սոցիալական կառույցների կողմից տվյալ սոցիալական խմբերին մատուցվող սոցիալական ծառայությունների որակը:

Արարատի մարզում գործում է տաս կազմակերպություն, որոնցից հինգը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց աջակցությանը, հինգը՝ խոցելի խմբերի՝ մասնավորապես անապահով ընտանիքներին, երեխաներին

Արմավիր քաղաքի ՄԱՍԳ-ն աղքատության նպաստի տրամադրումից զատ 2017 թ-ին իրականացրել է հինգից վեց ընտանիքի ուղղորդում հասարակական կազմակերպություններ, և գործազուրկ շահառուների ներառում ԶՏԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի մեջ:

և երիտասարդներին աջակցության մատուցմանը: Արարատում գործող հասարակական կազմակերպությունների թիվը՝ ի համեմատ, Արմավիրի մարզի առավել մեծ է, սակայն այստեղ ևս բացակայում են մի շարք խոցելի սոցիալական խմբերին մատուցվող ոչ պետական սոցիալական ծրագրերը: Արարատի մարզի հասարակական կազմակերպությունները հաճախ բախվում են ֆինանսական սուղ միջոցների խնդրի հետ, որի հետևանքով մի շարք կազմակերպություններ ժամանակավորապես չեն գործում տվյալ պահին: Մշտական գործունեություն մարզում ծավալում են նշված տաս կազմակերպություններից վեցը, որոնց կազմում այլ մասնագետների հետ մեկ տեղ աշխատում է հինգ սոցիալական աշխատող և մեկ սոցիալական մանկավարժ:

Թե՛ Արարատի, թե՛ Արմավիրի մարզերում ՄՍՏԳ-ների դեպք վարողների շրջանում նկատվում է մարզում սոցիալական աջակցության ոլորտում նորարարությունների և փոփոխությունների վերաբերյալ չեզոք կամ բացասական վերաբերմունք: Դեպքի վարման գործընթացը ընկալվում է որպես առավելապես վարչարարական գործիք, մինչդեռ դեպքի վարման՝ որպես շահառուին ոչ նյութական սոցիալական աջակցության մատուցման գործընթացում կարևորագույն գործիքի ընկալումը և գործածումը բացակայում է: Շահառուների անհատական ծրագրերի ձևավորումը կրում է ֆորմալ բնույթ:

Արարատի մարզի ՄՍՏԳ-ների դեպք վարողները նշում են, որ որևէ փոփոխություն իրենց կողմից շահառուներին մատուցվող ծառայությունների համատեքստում չի իրականացվել՝ դեպքի վարման մեթոդաբանության ներմուծման հետ պայմանավորված: Դեպք վարողները իրենց կողմից անհատական ծրագրերի կազմումը և առհասարակ դեպքի վարման գործընթացը պայմանականորեն անվանում են ուղղակի «թղթի սևացում», այսինքն ֆորմալ վարչարարական պարտականություն, որը չի ծառայում որևէ իրական նպատակի և որևէ կերպ չի աջակցում շահառուին մատուցվող ծառայությունների բարելավմանը: Ինչպես նշում են սոցիալական ծառայությունների աշխատակիցները այս հանգամանքը պայմանավորված է մի շարք գործոններով՝

- *Ռեսուրսների սակավություն:* Դեպք վարողներին մասնավորապես չեն տրամադրվում բավականաչափ նյութական և տեխնիկական ռեսուրսներ տունայցերի իրականացման համար:
- *Լիազորությունների սակավություն:* Սոցիալական ծառայությունների մատուցան ոլորտում դեպք վարողները չեն տիրապետում բավականաչափ լիազորությունների շահառուներին անխափան ուղղորդման իրականացման համար: Եթե այն ծառայությունները կամ ծառայությունների աշխատակիցները, որտեղ դեպք վարողը ուղղորդում է շահառուին, չեն ցանկանում մատուցել անհատական սոցիալական ծրագրով նախատեսված համապատասխան ծառայությունները, դեպք վարողը չի կարող որևէ ֆորմալ կերպով ազդել ծառայության աշխատանքի վրա կամ «ստիպել» աշխատկցին մատուցել նշված ծառայությունը: Այսինքն, դեպք վարողը կարող է կարիքի գնահատման հիման վրա ուղղորդել շահառուին որևէ սոցիալական կառույց, բայց չի կարող ապահովել նշված սոցիալական կառույցի կողմից շահառուին ծառայության մատուցումը: (*«Մատների արանքով են նայում շահառուի խնդիրներին, եթե դեպք վարողը դիմում է որևէ կազմակերպության՝ ներկայացնելով շահառուի խնդիրը: Դեպք վարողը պետք է ստիպի, որ այլ ծառայությունը շահառուին ծառայություն մատուցի: Ասում են, «Քեզ շա՞տ է պետք» Եթե անձնական կապերի միջոցով չես կարողանում կազմակերպել ծառայության մատուցումը, չի ստացվում իրականացնել ուղղորդումը»:* Նշվել է դեպք վարողի հետ իրականացված հարցազրույցում)
- *Բնակչության շրջանում տեղեկացվածության ցածր մակարդակ:* Համայնքի բնակիչները տեղյակ չեն սոցիալական աշխատողի պարտականությունների և իրավունքների վերաբերյալ. շահառուները դեպք վարողին ընկալում են որպես օտար անձնավորություն, որը ցանկանում է ներխուժել ընտանիքի անձնական խնդիրների մեջ: Այսպիսի ընկալումը ձևավորում է մի իրավիճակ, որը հաճախ անհնարին է դարձնում տունայցերի իրականացումը:
- *Մասնագիտական կարողությունների և գիտելիքների սակավություն:* Դեպք վարողների գերակշռող մասը մասնագիտությամբ սոցիալական աշխատողներ չեն: ՄՍՏԳ-ների աշխատակցների մեծամասնությունը դեռևս չեն տիրապետում

դեպքի վարման իրականացման համար անհրաժեշտ հմտությունների և գիտելիքների:

- *Միջգերատեսչական համագործակցության կայուն հիմքերի բացակայություն:* Սոցիալական ծառայությունների աշխատակիցները նշում են, որ պետական և ոչ պետական ոլորտների կառույցները իհարկե կապված են միմյանց հետ տեղեկատվական և գործառնական ալիքներով, բայց այնուամենայնիվ դեռևս չեն ձևավորվել անխափան և մշտական բնույթի համագործակցային հարաբերությունների համար անհրաժեշտ ընթացակարգեր:
- *Համայնքային սոցիալական ծրագրերի բացակայություն:* Թե՛ Արարատի, թե՛ Արմավիրի մարզերում չեն իրականացվում ԻՄԾ-ների կայացման ծրագրով նախատեսված համայնքի կարիքի գնահատման հիման վրա ձևավորված տեղեկան սոցիալական ծրագրերը:

Միջգերատեսչական համագործակցություն ասելով՝ տարածքային մարմինները հիմնականում հասկանում են ուղորդման գործընթացները, որոնք իրականացվում են ՄՍՏԳ-ների դեպք վարողների կողմից, որոնց արդյունքում այս կամ այն սոցիալական կամ առողջապահական կառույցը շահառուին մատուցում է համապատասխան ծառայությունը: Դեպքի վարման՝ դեպքի քննարկման, դիտարկման, անհատական սոցիալական ծրագրի կազմման և իրագործման ընթացքում, բազմամասնագիտական խմբի գործածման փորձ թե՛ Արարատի, թե՛ Արմավիրի սոցիալական ծառայությունները չեն ունեցել, թեև տվյալ գործընթացը նախատեսված է միջգերատեսչական համագործակցության կանոնակարգով: Արարատի մարզում սոցիալական ծառայությունները միջգերատեսչական համագործակցության տեսնկյունից մի փոքր ավելի շատ են առաջադիմել, քանի որ նշում են, որ համակարգող խորհուրդ է ձևավորվել, որին տարածքային մարմինների ներկայացուցիչներից գատ անդամակցում է մեկ հասարակական կազմակերպության ներկայացուցիչ և մեկ ոստիկան: Այնուամենայնիվ սոցիալական համագործակցության գոծող ընթացակարգեր այստեղ նույնպես դեռևս չեն ձևավորվել:

2.2 ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ԽՀՄ հանձնաժողովների անդամների հետ իրականացված հարցումների արդյունքները

Արարատի մարզի Արարատի, Բուրաստանի, Շահումյանի, Ոստանի, Ագատաշենի համայնքների ԽՀՄ-ներին կից ձևավորված հանձնաժողովները բաղկացած են 5-ական անդամներից (բացառությամբ մեկի): 5 համայնքերում էլ գործում են ԽՀՄ-ներին կից հանձնաժողովներ, որտեղ ներգրավված են համայնքապետարանի և նրա ենթակայության տակ գտնվող կառույցների՝ դպրոցների, մանկապարտեզների, բուժհաստատությունների: Վերոնշյալ 5 հանձնաժողովներից 4-ում ընդգրկված են նաև ավագանու անդամներ: Չնայած այն հանգամանքին, որ ԽՀՄ-ների կազմում կան մանկավարժներ, իսկ Բուրաստանի հանձնաժողովի նախագահը հայոց լեզվի ուսուցիչ է՝ հանձնաժողովներում ընդգրկված չեն ՔՀԿ-ների ներկայացուցիչներ:

Գրեթե նույն իրավիճակն է տիրում ՀՀ Արմավիրի մարզից ընտրված 5 համայնքների՝ Արմավիր, Հովտամեջ, Մրգաշատ, Մրգաստան, Մյասնիկյան հանձնաժողովներում, այն տարբերությամբ, որ Մրգաշատի ԽՀՄ հանձնաժողովում ընդգրկված է սոցիալական մանկավարժ, իսկ Արմավիրի ԽՀՄ հանձնաժողովում՝ սոցիոլոգ-մանկավարժ:

10 Հանձնաժողովներից ոչ մեկի կազմում ներգրավված չեն իրավաբաններ, սոցիալական մանկավարժներ և ՔՀԿ-ների ներկայացուցիչներ: Հանձնաժողովները ձևավորվել են ոչ այդքան մասնագիտական նպատակահարմարությունից և սպասվող աշխատանքների բնույթից ելնելով, որքան համայնքի առավել պատրաստակամ կամավորներից: ԽՀՄ-ներին կից հանձնաժողովները փաստացի իրականացնում են սոցիալական աշխատանք, որը սահմանվում է որպես մասնագիտական գործունեություն, բայց դրանց անդամները չունեն համապատասխան մասնագիտական պատրաստվածություն:

ԽՀՄ-ներին կից հանձնաժողովների անդամները պետք է հստակ պատկերացում ունենան իրենց գործունեության ոլորտն ընդգրկող իրավաօրենսդրական դաշտից, որը բավականին ընդգրկուն է և դուրս է նրանց կանոնդարական կամ աշխատակարգային գործառույթների շրջանակներից, օրինակ՝

հանձնաժողովի անդամը պետք է իրազեկ լինի ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածներից, ՀՀ քաղաքացիական և ՀՀ ընտանեկան օրենսգրքերից, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքից, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքից, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքից, «Քաղաքացիական կացության ակտերի մասին», ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից, ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներից և այլն:

ԽՀՄ-ը հանձնաժողովները պետք է անցնեն լուրջ մասնագիտական վերապատրաստում, որովհետև նրանք տանում են սոցիալական աշխատանք: Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ «<Սոցիալական աշխատանքը մարդու անհատական սոցիալական կարիքների բավարարման նպատակով հոգեբանական և մանկավարժական մեթոդների ու եղանակների կիրառման միջոցով իրականացվող մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է մարդու (անձամբ այն իրականացնելու անկարողության դեպքում) կյանքի դժվարին իրավիճակը հաղթահարելուն կամ կանխարգելելուն՝ մարդուն, ընտանիքին, սոցիալական այլ խմբերին անհատական օգնություն ցուցաբերելու միջոցով՝ սույն օրենքով, ՀՀ-ը և այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով>>, իսկ 2րդ կետով սահմանվում է, որ սոցիալական աշխատանքի մասնագետներ են «սոցիալական աշխատողն ու սոցիալական սպասարկողը»¹⁴:

Հանձնաժողովի անդամները չունեն համապատասխան մասնագիտական պատրաստվածություն, և իրենց աշխատանքները իրականացնելով հասարակական հիմունքներով՝ չունեն նյութական մոտիվացվածություն, որի արդյունքում տուժում է այն սուբյեկտը, որի վերաբերյալ կարող է աշխատանք ծավալել ոչ պրոֆեսիոնալ մարմինը: Ակնհայտ է նաև, որ վերապատրաստման կուրսեր ացնելով իրականում հնարավոր չէ դառնալ սոցիալական ոլորտի մասնագետ, ինչպես և հոգեբան կամ իրավաբան:

ԽՀՄ-ները ունեն երեխաների ճակատագրի վերաբերյալ որոշում կայացնելու բավականին լայն լիազորություններ, սակայն նրանց իրավական կարգավիճակը չի

¹⁴ Նույն տեղում

համապատասխանում նրանց արհեստավարժությանը: Այս առումով էական նշանակություն ունի ԽՀՄ-ների պրոֆեսիոնալ ինստիտուտի ներդրումը, որը ծախսատար գործընթաց է: Անորոշ է նաև խնամատարությանը հանձնված երեխայի սոցիալ-իրավական հետագա կարգավիճակը, քանի որ հանձնաժողովները չեն իրականացնում սահմանված կարգի համաձայն նախատեսված մոնիթորինգը: Սահմանված չեն մոնիթորինգի հստակ չափորոշիչներ, ժամկետներ, հաշվետվության ձևեր, որոնք կարող են զգոն պահել խնամատարությունը ստանձնած անձանց:

Մասնավորապես կարևոր է սոցիալական մանկավարժի դերը, որն անտեսված է ԽՀՄ հանձնաժողովներում: Սոցիալական մանկավարժի ներգրավումն այս աշխատանքներին հնարավորություն կընձեռի դպրոցում սովորող երեխաների հետ անմիջական աշխատանք տանող մասնագետի փորձառության և տեղեկատվական բազայի օգտագործման: Սոցիալական մանկավարժի նպատակն է աջակցել երեխային և նրա ընտանիքին, իրականացնել ոչ բարեկեցիկ ընտանիքների սոցիալական իրավիճակի ուսումնասիրություն, սոցիալական իրավունքների և շահերի պաշտպանություն, սովորողի՝ որպես անհատի սոցիալականացում: Մեկ այլ խնդիր է, թե տվյալ դպրոցում գործող սոցիալական մանկավարժն որքանով է կատարում իր պաշտոնական գործառույթները, կամ որքանով է այս ինստիտուտը մեզանում կայացած: Այնուհանդերձ ուսումնասիրելով հանրակրթական հաստատությունում գործող սոցիալական մանկավարժի ուսումնական տարեկան պլանը՝ գիտակցում ենք նրա առանցքային նշանակությունը երեխաների սոցիալական աջակցության ցուցաբերման գործում: Օրինակ՝ սոցիալական մանկավարժի տարեկան պլանում ներառվում են հետևյալ աշխատանքները՝

- Դասարանի, դպրոցի, միկրոշրջանի սոցիալական անձնագրի կազմում
- Սովորողների ընտանիքների սոցիալական և կրթական մակարդակի տեղեկատվության հավաքում և վերլուծություն
- Սովորողների դպրոց հաճախելու և ընթացիկ առաջադիմության վերլուծություն, ժամանակին միջոցներ ձեռնարկել իրավիճակը բարելավելու ուղղությամբ
- Երեխաների տվյալների բանկի ստեղծում և թարմացում
- Շեղված վարքագծի հակում ունեցող երեխաների ախտորոշում

Հաջորդ կարևոր խնդիրն է ԽՄՀ-ներում իրավաբանի ընդգրկումը: ԽՄՀ-ների կողմից իրականացվող գործառնություններն առնչվում են նաև դատաիրավական գործընթացներին: ԽՄՀ-ների գործառնությունների մեջ մտնում է նաև խնամարկյալի սոցիալական վիճակի մոնիթորինգը և նրա մասին տեղեկատվության հավաքագրումը: Կարևորում ենք նաև սոցիոլոգի կամ մոնիթորինգի ընդգրկումը հանձնաժողովների աշխատանքներին: Հասկանալի է, որ բոլոր համայնքներում հնարավոր չէ ձևավորել ԽՀՄ-ների պրոֆեսիոնալ աշխատակազմեր, որովհետև այդ աշխատանքը հասարակական է, և հիմնականում պարտականությունը դրվում է համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վրա, որոնք արդեն ունեն աշխատանք և Հանձնաժողովի աշխատանքներին շատ դեպքերում վերաբերում են որպես իրենց վրա դրված հասարակական պարտականության: Ոչ բոլոր համայնքներում կարելի է գտնել համապատասխան մարդկային ռեսուրս, ուստի կարծում ենք, որ պետք է հաշվի առնել իրականացվող աշխատանքի ծավալը և գնալ ԽՄՀ-ների խոշորացման տարբերակով: Այսինքն պայմանական 5 համայնքի սպասարկի Խնամակալության և հոգաբարձության մեկ մարմին: Այդ մարմինը պետք է գործի վճարովի սկզբունքով և բացկացած լինի պրոֆեսիոնալներից:

2.6 ՀՀ Արարատի և ՀՀ Արմավիրի ԽՀՄ-ների անդամների հետ իրականացված հարցումների ամփոփ նկարագիր

Փորձագետի կողմից մշակված 13 կետից բաղկացած հարցաշարով իրականացված հարցումները ներառել են նաև հարցադրումներ վերջին մեկ տարվա ընթացքում 2016թ սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ սեպտեմբերը) Խնամատարության և հոգաբարձության մարմնի կողմից ուսումնասիրված դեպքերի և կայացված որոշումների վերաբերյալ: Ըստ այդմ, Շահումյանի ԽՀՄ-ն ստացել է 6 գործ և դատարանի որոշմամբ անգործունակ է ճանաչել մեկ քաղաքացու, իսկ Արարատում 3-4 նիստ է գումարվել և ոչ մի գործ չի քննվել:

Արարատի մարզում գործող ԽՀՄ-ների անդամները որպես իրենց գործունեության ընթացքում ծագող հիմնական խնդիր նշել են մարզում առկա սոցիալական ծառայությունների բացակայությունը, քանի որ ԽՀՄ-ն չի տիրապետում բավականաչափ ռեսուրսների ընտանիքներին սոցիալական, հոգեբանական կամ նյութական աջակցություն մատուցելու համար:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկատվությունը ԽՀՄ-ները հիմնականում ստանում են անձնական սոցիալական ցանցի միջոցով, իսկ տեղեկատվության ստացման ֆորմալ և մշտապես գործող ընթացակարգեր դեռևս չեն մշակվել:

Հանձնաժողովների որոշումների վերաբերյալ բողոքարկումների մասով պատասխան է տրվել, որ հանձնաժողովների ոչ մի որոշում բողոքարկման չի ենթարկվել դատական կարգով, ինչպես նաև հանձնաժողովների անդամներից որևէ մեկը իր գործունեության համար օրենքով չի ենթարկվել պատասխանատվության:

Թե՛ Արարատի, թե՛ Արմավիրի մարզերի ԽՀՄ-ների և ԽՀՀ-ների անդամները վերջին երեք տարիների ընթացքում չեն մասնակցել սոցիալական աշխատանքի, իրավագիտության, հոգեբանության կամ երեխաների պաշտպանության ոլորտներին առնչվող որևէ վերապատրաստական դասընթացների:

Եթե փորձենք ամփոփել ԽՀՄ-ներին կից հանձնաժողովների անդամների շրջանում իրականացված հարցումների արդյունքները, ապա կարող ենք հանգել երկրնտրանքի առաջ՝ կամ հանձնաժողովները արհեստավարժ են և տիրապետում են իրավիճակին և չունեն ոչ մի խնդիրներ, կամ ընդհակառակը՝ հանձնաժողովների անդամները իրենց պատասխանատվությանը չեն վերաբերվում անհրաժեշտ լրջությամբ, որի համար կան և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ հիմքեր:

Հաշվի առնելով հանձնաժողովների մասնագիտական կազմը, մասնագիտական վերապատրաստումների բացակայությունը և քննված գործերի սակավությունը, ակներև է, որ հանձնաժողովն ամբողջությամբ հիմնվում է մեկ կամ երկու անդամի ունեցած գիտելիքների վրա և որոշում է կայացնում մեծապես չխորանալով գործի էության մեջ: Հանձնաժողովները իրենց աշխատանքի համար չեն վարձատրվում և դրան վերաբերում են որպես հասարակական աշխատանքի, որի արդյունավետությունը կախված է հանձնաժողովի անդամի ցանկությունից կամ պատրաստակամությունից: Իրավական առումով հստակ չէ նաև հանձնաժողովի անդամի իր պարտականությունների մեջ թերանալու վերաբերյալ պատասխանատվության չափը:

Հանձնաժողովները չեն իրականացնում խնամատար երեխայի կարգավիճակի վերաբերյալ հետադարձ մշտադիտարկում: Հանձնաժողովների կողմից պարբերաբար

իրականացվող մշտադիտարկման արդյունքում է միայն հնարավոր բացահայտել առկա իրավիճակը երեխան լա՞վ է իրեն զգում թե ոչ, նա ինտեգրվե՞լ է նոր ընտանեկան միջավայրում թե ոչ, ինչպիսի՞ խնդիրներ ունի, նրա նկատմամբ որևէ ոտնձգություն իրականացվո՞ւմ է թե ոչ, երեխայի սոցիալ-իրավական-կրթական միջավայրը ինչպիսի՞ն է և այլն, և այլն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով ՀՀ-ում ձևավորված սոցիալական աջակցության համակարգը կարգավորող բոլոր իրավական ակտերի ուսումնասիրությունից, և Արմավիրի ու Արարատի մարզերում իրականացված հետախուզական հետազոտության արդյունքներից՝ մշակվել են ընտանիքներին մատուցվող սոցիալական աջակցության գործընթացի բարելավմանն ուղղված մի շարք առաջարկություններ.

1) Կարևորել սոցիալական աշխատողի ինստիտուտը և օգտագործել նրա ռեսուրսը համայնքում երեխաների հետ տարվող աշխատանքներում: Մասնավորապես, բարձրացնել ազգաբնակչության շրջանում սոցիալական աշխատողի գործունեության և դեպքի վարման վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը՝ մշակելով համապատասխան տեղեկատվական նյութեր (սոցիալական գովազդներ, պաստառներ)

2) Հստակեցնել դեպքի վարողների լիազորությունները և այն գերատեսչությունների պարտավորությունները, որոնց կողմից նախատեսվում է շահառուին որոշակի ծառայությունների մատուցում՝ ըստ դեպքի վարողի կողմից մշակված անհատական ծրագրի:

3) Դեպքի վարողների շրջանում բարձրացնել տեղեկացվածության մակարդակը միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգի և ընթացակարգերի վերաբերյալ:

4) Համայնքային և մարզային մակարդակներում ձևավորել պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների անդամներից կազմված համակարգող և խորհրդատվական հանձնաժողովներ, որոնք կաջակցեն դեպք վարողներին իրականացնել առավել խնդրահարույց դեպքերի գրագետ վարում՝ սոցիալական անհատական ծրագրի կազմում և իրագործում:

5) Յուրաքանչյուր ՄՍՏԳ-ին կից ձևավորել դեպքի վարման գործընթացում աջակից բազմամասնագիտական խմբեր՝ այն համայնքների մասնագիտական ռեսուրսի գործածմամբ, որոնք սպասարկվում են տվյալ ՄՍՏԳ-ի կողմից:

- 6) Մշակել միջգերատեսչական սոցիալական համագործակցության ընթացքում ՔՀԿ-ների ներգրավման ընթացակարգեր, որոնք կապահովեն տարածքային մարմինների և ՔՀԿ-ների միջև մշտական համագործակցային հարաբերությունների զարգացմանը:
- 7) Պարբերաբար կազմակերպել Արարատի և Արմավիրի խորհրդատվական և համակարգող մարմինների (որոնց կանդամակցեն տարածքային մարմինների և ՔՀԿ-ների ներկայացուցիչներ) միջև փորձի փոխանակմանն ուղղված միջոցառումներ:
- 8) Ակտիվացնել աջակցող ցանցերի աշխատանքները համայնքային մակարդակում և մշակել դրանց տրամաբանական կապը համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների հետ:
- 9) Ձևավորել տեղեկատվության հավաքագրման և փոխանակման միասնական պորտալ, որը հնարավորություն կընձեռի սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կազմակերպություններին արագ տեղեկատվություն փոխանակել:
- 12) Սահմանել, որ համայնքում այլընտրանքային խնամք ստացող երեխաների տվյալների բազայի առկայությունը, նրանց հաշվառումը պարտադիր է:
- 13) Վերանայել ԽՀՄ-ների կազմը և այն համալրել սոցիալական և իրավական ոլորտների մասնագետներով:
- 14) ԽՀՄ-ների անդամների շրջանում պարբերաբար իրականացնել երեխաների պաշտպանության ոլորտի վերաբերյալ վերապարտաստումներ:
- 15) Մշակել այլընտրանքային խնամք ստացող երեխաների վիճակի մշտադիտարկման հստակ ընթացակարգեր:

**Ոլորտային Հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման
համառոտ տեղեկանք**

1. **Երեխաների իրավունքների պաշտպանության հանձնաժողով.** Հանձնաժողովը ձևավորվել է 2012 թվականի դեկտեմբերի 28-ին և գումարել է 2 նիստ¹⁵:
2. Ազգային մակարդակում աջակցող ցանց. Ազգային մակարդակում աջակցող ցանցը հիմնադրվել է 2016 թվականին գումարել է 2 նիստ:
3. Տարածքային մակարդակում գործող ցանցեր. Այս ցանցերը ևս ձևավորվել են 2016 թվականին, սակայն այս ինստիտուտը դեռ լիովին չի կայացել: Այս ցանցերի գործում են սոցիալական աջակցության տարածքային մարմիններին կից և դեռևս լիովին չեն իրականացնում իրենց վրա դրված գործառնությունները:

Հավելված 2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԿՈՂՄԵՐԸ

3. Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերն են՝
- 1) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ի դեմս՝
 - ա. սոցիալական ապահովության տարածքային կենտրոնների,
 - բ. զբաղվածության տարածքային կենտրոնների,
 - գ. բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների,
 - դ. ինամք տրամադրող սոցիալական պաշտպանության հաստատությունների,
 - ե. կացարան տրամադրող կազմակերպությունների.
 - 2) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն ի դեմս՝

¹⁵ http://www.mlsa.am/?page_id=2845

- ա. հաստուկ հանրակրթական դպրոցների,
- բ. ավագ դպրոցների,
- գ. հիմնական դպրոցների,
- դ. մասնագիտացված դպրոցների,
- ե. միջնակարգ դպրոցների,
- զ. արտադպրոցական հաստատությունների,
- է. վարժարանների,
- ը. կրթահամալիրների,
- թ. նախնական մասնագիտական (արհեստագործական) պետական ուսումնական հաստատությունների,
- ժ. միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների,
- ժա. համալսարանների,
- ժբ. ակադեմիաների,
- ժգ. ինստիտուտների,
- ժդ. կոնսերվատորիաների.

3) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն ի դեմս՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնող կազմակերպությունների՝

ա. ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններ (առողջության առաջնային պահպանման գործառույթ իրականացնող կազմակերպություններ),

բ. մասնագիտացված բժշկական կազմակերպություններ (հիվանդանոցներ և դիսպանսերներ),

գ. մասնագիտացված ստոմատոլոգիական պոլիկլինիկական կազմակերպություններ,

դ. արտահիվանդանոցային շտապ բժշկական օգնության ծառայություն իրականացնող բժշկական կազմակերպություններ (կարող է լինել ինքնուրույն և հիվանդանոցային կազմակերպությունների կազմում),

ե. մարզպետարանի ենթակայության հիվանդանոցների, պոլիկլինիկաների, գյուղական ամբուլատորիաների և առողջության կենտրոնների,

գ. տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության՝ առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող հաստատությունների (պոլիկլինիկաներ, գյուղական ամբուլատորիաներ, առողջության կենտրոններ, բժշկական կենտրոններ)։

4) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունն ի դեմս՝

ա. միգրացիոն պետական ծառայության,

բ. փրկարար ծառայության ճգնաժամային ազգային կենտրոնի (վարչություն),

գ. «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության.

5) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն ի դեմս՝

ա. քրեակատարողական հիմնարկների,

բ. այլընտրանքային պատժի կատարման բաժանմունքների,

գ. «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն»

պետական ոչ առևտրային կազմակերպության.

6) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունն ի դեմս՝

ա. միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների,

բ. մասնագիտացված դպրոցների.

7) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն ի դեմս՝

ա. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության,

բ. տարածքային զինվորական կոմիսարիատների.

8) Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության նախարարությունն ի դեմս՝

ա. միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների,

բ. արտադպրոցական հաստատությունների (մարզադպրոցների).

9) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն ի դեմս՝

ա. համայնքային ոստիկանության ստորաբաժանումների,

բ. անչափահասների գործերով ստորաբաժանումների,

գ. բնակչության տեղական ռեզիստորը վարող տարածքային ստորաբաժանումների,
դ. ոստիկանության ուսումնական հաստատության.

10) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն ի դեմս՝ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների.

11) Հայաստանի Հանրապետության մարզպետարաններն ի դեմս՝
ա. աշխատակազմերի կառուցվածքային ստորաբաժանումների,
բ. սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների,
գ. տարրական դպրոցների,
դ. միջնակարգ դպրոցների,
ե. հատուկ հանրակրթական դպրոցների,
զ. հիմնական դպրոցների,
է. վարժարանների,
ը. արտադպրոցական հաստատությունների.

12) տեղական ինքնակառավարման մարմիններն ի դեմս (համաձայնությամբ)՝
ա. աշխատակազմի, Երևանում՝ նաև վարչական շրջանի ղեկավարի
աշխատակազմի, կառուցվածքային ստորաբաժանումների,
բ. սոցիալական աջակցության տարածքային բաժինների,
գ. քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժինների,
դ. խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների,
ե. նախադպրոցական հաստատությունների,
զ. արտադպրոցական հաստատությունների,
է. Երևանում՝ հիմնական, ավագ և հատուկ դպրոցների:

Հոդված 20. Սոցիալական աջակցության հիմնական սկզբունքները

1. Սոցիալական աջակցության հիմնական սկզբունքներն են՝

1) երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու

առաջնահերթությունը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաներին նախապատվություն տալը.

2) համագործակցությունը՝ սոցիալական աջակցության տրամադրումը աջակցող ցանցի մասնակիցների փոխգործակցության և համատեղ գործունեության հիման վրա.

3) համարժեքությունը և շարունակականության ապահովումը՝ սոցիալական կարիքներին առավել համապատասխան սոցիալական աջակցության տրամադրումը, դրանց շարունակականության ապահովումը.

4) թափանցիկությունը՝ սոցիալական աջակցության վերաբերյալ տեղեկատվության հասանելի լինելը հասարակության համար.

5) սոցիալական խնամառության բացառումը՝ անձի ակտիվության դրսևորման և ինքնօգնության ունակությունների զարգացումը սոցիալական աջակցությունից շարունակական կախվածությունը բացառելու համար.

6) նախաձեռնողականությունը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելուն նպաստող գործոնների վերհանումը, այդ գործոնների կանխմանն ու հակազդմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

7) խտրականության արգելքը՝ սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորությունների ապահովումը, սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում խտրական վերաբերմունքի բացառումը.

8) մասնակցությունն ապահովելը՝ անձի՝ իր սոցիալական խնդիրների լուծման որոշումների կայացմանը մասնակից դարձնելը.

9) կամայականության արգելքը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ անհավասար մոտեցում

ցուցաբերելու անթույլատրելիությունը, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
- ՀՄԾՏԿ – Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն
- ԻՄԾՀ – Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ
- ԽՀՄ – Խնամակալության և հոգաբարձության մարմին
- ՀՀ ԱՍՀՆ - Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ ՍԱՊԾ - Սոցիալական ապահովության պետական ծառայություն
- ՀՀ ԲՍՓ – ՀՀ Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն